ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ԶԵԿՈՒՅՑԸ

08.06.2020 17:47

Փաստաբանների պալատը հրապարակում է 2018թ. հունվարի 1-ից առ 2020թ. փետրվարի 10-ն ընկած ժամանակահատվածում փաստաբանների իրավունքների խախտումներն արձանագրող աշխատանքային խմբի զեկույցը:

Զեկույցը կազմել է Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (այսուհետ՝ Պալատ) նախագահի 23.01.2020 թվականի թիվ 18-Ա որոշմամբ ձևավորված Փաստաբանների իրավունքների խախտումներն արձանագրող աշխատանքային խումբը՝ փաստաբանների մասնագիտական գործունեությունը խոչընդոտող, ինչպես նաև փաստաբաններին սպառնալու և վիրավորելու դեպքերն արձանագրելու և Պալատի խորհրդին ներկայացնելու նպատակով և ամփոփվել (խմբագրվել) է Պալատի խորհրդի կողմից:

Ուսումնասիրությունը կատարվել է հիմք ընդունելով ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմի կողմից տրամադրված 17.02.2020թ. տեղեկանքը՝ 2018թ. հունվարի 1-ից առ 2020թ. փետրվարի 10-ն ընկած ժամանակահատվածում փաստաբանների իրավունքների պաշտպանության հետ կապված ՀՀ փաստաբանների պալատի կողմից կատարված գործողությունների մասին, ինչպես նաև համացանցում, զանգվածային լրատվության կայքերում տեղ գտած նյութերը, որի արդյունքում առանձնացվել են փաստաբանների իրավունքների խախտումների հետևյալ տարատեսակները՝

1. Պետական մարմինների կողմից փաստաբանների կամ նրանց ընտանիքների հանդեպ դրսևորած՝

1) վիրավորանք.

2) խոչընդոտում.

3) սպառնալիք.

4) անձեռնմխելիության խախտում:

2. Հանրության որոշ խմբերի կողմից փաստաբանների կամ նրանց ընտանիքների հանդեպ դրսևորած՝

1) վիրավորանք.

2) խոչընդոտում.

3) սպառնալիք.

4) անձեռնմխելիության խախտում.

5) նույնացում վստահորդի հետ:

3. Փաստաբանի վարքագիծ՝

1) առերևույթ փաստաբանի անվան, դերի վարկաբեկում.

2) փաստաբանի կողմից կատարված գործողություններ, որոնք վերջինիս առերևույթ կարող են նույնացնել վստահորդի հետ:

Ձեկույցի անբաժանելի մասը հանդիսացող տեղեկանքում արձանագրվել են փաստաբանների իրավունքների խախտումները վերացնելուն ուղղված 44 կետից կազմված փաստաբանների պալատի կողմից կատարված գործողություններ:

Ձեկույցի եզրափակիչ մասում տեղ են գտել կոչեր և առաջարկությունները:

«Ամփոփելով վերոնշյալը՝

1. **Փաստաբաններին կոչ ենք անում** ավելի հաճախ դիմումներ ներկայացնել ՀՀ փաստաբանների պալատ և իրավասու մարմիններ՝ բացահայտելով պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պաշտոնատար անձանց, այդ թվում նաև դատավորների չարաշահումների, անօրինական գործողությունների յուրաքանչյուր դեպքի մասին՝ անկախ դրա ծանրությունից, հանրային վտանգավորության աստիճանից կամ հետևանքներից.
2. **Փաստաբաններին կոչ ենք անում** սատարել միմյանց և համապատասխան առաջարկություններով հանդես գալ պետական մարմիններում, այդ թվում նաև միասնական ուժերով օրենքով չարգելված ցանկացած եղանակներով հակազդել փաստաբանի նկատմամբ կատարված անօրինական գործողություններին.
3. **Առաջարկվում է Փաստաբանների պալատի**

աշխատակազմին Փաստաբանների պալատի խորհրդի հավանությամբ շրջանառության մեջ դնել խորհրդատվական ուղեցույց, որը կպարունակի դրույթներ փաստաբանի կողմից իր գործի հանրայնացման ժամանակ՝ փաստաբան-վստահորդ նույնացվելուց խուսափելու մասին, որպեսզի պահպանվեն մասնագիտական շփման կանոնները և փաստաբանը չնույնացնի իրեն իր վստահորդի հետ կամ կարողանա առնվազն այդ սահմանների շրջանակում պահպանել փաստաբան-վստահորդ հարաբերություններն այլ անձանց առջև:

4. **Կոչ ենք անում պետական մարմիններին** միջոցներ ձեռնարկել (այդ թվում՝ կոշտ արձագանքել իրենց ենթակայության տակ գտնվող մարմինների կամ պաշտոնատար անձանց ոչ օրինական վարքագծին) փաստաբան-պետական մարմին հարաբերություններում առկա խնդիրները նվազագույնի հասցնելու ուղղությամբ՝ բարձրացնելով միմյանց նկատմամբ հարգանքը:
5. **Կոչ ենք անում Կառավարությանը** սոցիալական գովազդների, հոլովակների, հաղորդաշարերի և այլ հանրային միջոցառումներով նպաստել հասարակության իրավագիտակցության բարձրացմանը՝ փաստաբանության ինստիտուտի նկատմամբ հարգանք ձևավորելու նպատակով:
6. **Կոչ ենք անում օրենսդիր և գործադիր իշխանության մարմիններին** օրենսդրական նախաձեռնության կարգով երաշխիքներ սահմանել փաստաբանների մասնագիտական գործունեությունը խոչընդոտելու, փաստաբանի ընտանիքի անդամներին սպառնալու, փաստաբանին՝ մասնագիտական գործունեության իրականացման առնչությամբ վիրավորելու կամ զրպարտելու արարքներից պաշտպանելու համար:»:

Բեռնել զեկույցը

Բեռնել տեղեկանքը

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })